

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

### ՀՀ արդարադատության նախարարին կից հանրային խորհրդի երկրորդ նիստի

Քաղաք Երևան

տասներկուսը սեպտեմբերի, երկու հազար տասնչորս թվական

ՀՀ արդարադատության նախարարությունում 2014 թվականի սեպտեմբերի 12-ին տեղի ունեցավ ՀՀ արդարադատության նախարարին կից հանրային խորհրդի երկրորդ նիստը՝ ՀՀ արդարադատության նախարար Հովհաննես Մանուկյանի գլխավորությամբ:

#### ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝

Հովհաննես ՄԱՆՈՒԿՅԱՆ՝ ՀՀ արդարադատության նախարար

Արսեն ՄԿՐՏՉՅԱՆ՝ ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ

Սուրեն ՔՐՄՈՅԱՆ՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Արման ԹԱԹՈՅԱՆ՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Միքայել ՄԻՆԱՍՅԱՆ՝ ՀՀ ԱՆ աշխատակազմի օրիանակապետության վերահսկողության տեսչության պետ

Արմեն ԳԱԼՍՅԱՆ՝ «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպություն

Արման ԴԱՆԻԵԼՅԱՆ՝ «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպություն

Ռոբերտ ՌԻԱԶՅԱՆ՝ «Հայաստանի հելսինկյան կոմիտե» իրավապաշտպան հասարակական կազմակերպություն

Հայկուհի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ՝ «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ

Անահիտ ԶԼԻՆԳԱՐՅԱՆ՝ «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպություն

Վիգեն ԽԱԶԱՏՐՅԱՆ՝ «Իրավունքի հայկական կենտրոն» հասարակական կազմակերպություն

Արտակ **ԶԵՅՆԱԼՅԱՆ՝** «Իրավունքի գերակայություն» իրավապաշտպան հասարակական կազմակերպություն

Օլգա **ՍԱՖԱՐՅԱՆ՝** «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե» ՀԿ

Բորիս **ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ՝** Երևանի մամուլի ակումբ

Գևորգ **ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ՝** «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպություն

Դավիթ **ԱՄԻՐՅԱՆ՝** «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ» հիմնադրամ

Արմինե **ՄԿՐՏՉՅԱՆ՝** «Աքիլես» ավտովարորդների իրավունքների պաշտպանության կենտրոն» հասարակական կազմակերպություն

Ռիմա **ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ՝** «Հայաստանի հրեական համայնք» հասարակական կազմակերպություն

Մարատ **ԱՏՈՎՄՅԱՆ՝** «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն

Նիստն արձանագրել է ՀՀ արդարադատության նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ, Խորհրդի քարտուղար **Լուսինե ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ:**

## **ՕՐԱԿԱՐԳ՝**

1. Թեմա՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծ: Ջեկուցող՝ նախարարի առաջին տեղակալ Արսեն Մկրտչյան
2. Հարցուպատասխան
3. Թեմա՝ Հանրային դրամական պահանջների հետ կապված օրենսդրական նախաձեռնություններ: Ջեկուցող՝ նախարարի առաջին տեղակալ Արսեն Մկրտչյան
4. Հարցուպատասխան
5. Թեմա՝ «Շարժական գույքի գրանցման մասին» ՀՀ օրենքի նախագիծ: Ջեկուցող՝ նախարարի առաջին տեղակալ Արսեն Մկրտչյան
6. Հարցուպատասխան
7. Թեմա՝ Քրեակատարողական հիմնարկի պետի որոշումների դեմ դատարան բերվող բողոքների ընդատության հարցեր: Ջեկուցող՝ նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյան
8. Հարցուպատասխան

## **ՔՆՆԱՐԿՈՒՄ**

**Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԸ** ողջունեց հանրային խորհրդի նիստին մասնակցող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին և կարևորեց օրակարգում ընգրկված հարցերի քննարկման անհրաժեշտությունը:

## **ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՐՑ**

**Ա.ՄԿՐՏՉՅԱՆԸ** կարևորեց նման հանդիպումների կազմակերպումը և նշեց, որ դրանց արդյունքում հնարավոր է դառնում քննարկել այն օրենքների նախագծերը, որոնք մշակվել են ՀՀ արդարադատության նախարարության կողմից:

Նրա տեղեկացմամբ, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը և «Շարժական գույքի գրանցման մասին» ՀՀ օրենքը Կառավարության կողմից համարվել

են անհետաձգելի և այս կամ հաջորդ ամսվա ընթացքում Ազգայի Ժողովում կդառնան քննարկման առարկա:

Երկու օրենքների նախագծերը նախապես տեղադրված են եղել ՀՀ արդարադատության նախարարության կայքում, դրանց վերաբերյալ հայտարարվել էր հանրային քննարկում: **Ա.ՄԿՐՏՉՅԱՆԸ** տեղեկացրեց, որ Նախարարությունը ստացել է մեկ-երկու առաջարկ բովանդակային ու կազմակերպական առումով, իսկ առաջին նախագծին անդրադարձել են նաև լրագրողները, ներկյացրել են իրենց դիտարկումները:

Նախարարի առաջին տեղակալի խոսքով՝ ներկայում գործում է «Անհատական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը: Նախարարության Թարգմանչական կենտրոնի առաջարկով «անհատական» տերմինը փոխարինվել է «անձնական»-ով:

Օրենքի նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 23-րդ հոդվածով և միջազգային պայմանագրերով սահմանված՝ անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի, մասնավորապես՝ անձնական տվյալները մշակելու ընթացքում մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը:

Օրենքն ունի նաև հասկացություններ, սահմանում է՝ ինչ է անձնական տվյալը: Անձնական տվյալների կատեգորիաները դասակարգված են, սահմանված է, թե ովքեր են համարվում անձնական տվյալ մշակողներ, ըստ որի՝ անձնական տվյալի մշակող է համարվում ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական կամ ֆիզիկական անձը: Ցանկացած գործողություն, որն իրականացվում է անձնական տվյալի հետ համարվում է տվյալների մշակում: Օրենքում հիմնական սկզբունքներ գոյություն ունեն, ըստ որոնց անձնական տվյալի մշակումը պետք է ունենա նպատակ և չի թույլատրվում հիմնական նպատակի համար անհրաժեշտ տվյալներից բացի այլ անձնական տվյալներ հավաքագրել: Ի ապահովումն այս սկզբունքի՝ օրենքում հստակ կանոններ կան այն մասին, որ յուրաքանչյուր անձ իր վերաբերյալ տեղեկություններ մշակող ցանկացած մարմնից կարող է հայցել ցանկացած տեղեկություն: Եթե անձնական տվյալների ոչ ճիշտ մշակում է իրականացվում, ապա

ցանկացած անձ կարող է պահանջել, որպեսզի ոչնչացվեն իր մասին այդ տեղեկությունները: Այս կարգավորումներն ունեն նաև ժամկետներ: **Ա.ՄԿՐՏՉՅԱՆԻ** խոսքով՝ ստեղծվելու է արդարադատության ոլորտում գործող մարմին, որն էլ կգրադվի անձնական տվյալների պաշտպանության հարցերով: Այն անկախ է լինելու, նախատեսված է մարմնի ղեկավարի ընտրության կարգը, նրա պաշտոնավարման ժամկետներն ու պաշտոնից ազատելու հիմքերը. եթե 65 տարին չի լրացել կամ առողջության հետ կապված խնդիրներ չկան ապա ղեկավարի լիազորությունները դադարեցնելու միակ ճանապարհը դատական կարգով հարցին լուծում տալն է: Մարմնի ղեկավարի ընտրությունը հետևյալ կարգով է լինելու՝ հինգ հասարակական կազմակերպություններ առաջարկում են թեկնածություն և ՀՀ արդարադատության նախարարն այդ թեկնածուներից մեկին ներկայացնում է ՀՀ վարչապետին նշանակման համար: Նախարարի առաջին տեղակալի համոզմամբ, սա ուղղված է ն՝ մարմնի անկախության ապահովմանը, և՛ քաղաքացիական հասարակության ինստիտուտների մասնակցության ապահովմանը: Այս օրենքով կարգավորվում են նաև այլ երկրներին տվյալներ փոխանցելու հարցերը:

## **ՀԱՐՑՈՒՊԱՏԱՍԽԱՆ՝**

**Գ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ** հետաքրքրվեց՝ եթե ոչ թե 5 այլ ավելի շատ հասարակական կազմակերպություններ են դիմում, այդ դեպքում ի՞նչ է նախատեսվում, ընտրությունն ինչպե՞ս է իրականացվելու:

**Ա.ՄԿՐՏՉՅԱՆԸ** ճշտում մտցրեց՝ չեն դիմում, թեկնածու են առաջադրում:

Նախարարը հորդորեց զեկուցողին ավելի մանրամասն ներկայացնել թեկնածուի առաջադրմանը վերաբերող տեղեկատվությունը:

**Ա.ՄԿՐՏՉՅԱՆԻ** խոսքով՝ օրենքը հիմնարար կանոն է տալիս, որ 5 հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված թեկնածուներից մեկին է ՀՀ արդարադատության նախարարը ներկայացնում Վարչապետին: Որպես ընտրության չափանիշներ օրենքը հղում է կատարել Կառավարության որոշմանը:

Գ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ հաջորդ հարցը վերաբերում էր հետևյալին՝ Գևորգ հնարավոր է մարմինը մերժի անձին տրամադրել տեղեկատվություն սեփական անձի վերաբերյալ: Նման դեպքերի համար որևէ կարգավորում կա՞:

**Ա.ՄԿՐՏՉՅԱՆԻ** խոսքով՝ իրականում այսօրվա օրենսդրության կարգավորումների շրջանակում նման ընկալում կարող է լինել ու չբացառեց, որ նման պատճառաբանությամբ կարող են մերժել անձնական տվյալի մասին տեղեկություն տրամադրելը: Բայց այս օրենքը, նախարարի առաջին տեղակալի համոզմամբ, հստակեցնում է այս հարցը և պատասխանը մեկն է՝ ցանկանացած անձ իր անձի վերաբերյալ մշակվող տեղեկությունները պահանջելու իրավունք ունի ցանկացած մարմնից: Այս կանոնները շատ հստակ են օրենքում դրված: Հենց այս օրենքն է, որ տալիս է բոլոր հարցերի պատասխանները:

**Գ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ** հետաքրքրում էր նաև հանրամատչելի անձնական տվյալների մասին հասկացությանը, այն իրենից ի՞նչ է ենթադրում:

**Ա.ՄԿՐՏՉՅԱՆԻ** տեղեկացմամբ, նախագծում հանրամատչելի անձնական տվյալ է համարվում այն տեղեկությունը, որը սուբյեկտի համաձայնությամբ կամ իր տվյալները հանրամատչելի դարձնելուն ուղղված գիտակցված գործողությունների կատարմամբ մատչելի են դառնում որոշակի կամ անորոշ շրջանակի համար: Այս կանոնը գործում է թե՛ ասուլիսներ վարելու, թե՛ ֆեյսբուքյան գրառումներ կատարելու ժամանակ: Օրինակ սոցիալական ցանցերն ունեն համապատասխան գործիքներ և դու կարող ես կարգավորել՝ ո՞ր ինֆորմացիան ես ցանկանում բացի ընկերներիցդ այլ մարդիկ տեսնեն, որոնք՝ ոչ:

**Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ** խոսքով՝ անձնական տվյալների պաշտպանությունը ենթադրում է, որ ոչ միայն դրանց մշակման գործընթաց, այլև՝ պահպանման ու օգտագործման: Մշակման առումով բավականին մանրամասներ տեսանք այս նախագծում բայց պահպանման ու օգտագործման մասով կարծես կարգավորումները թերի են հատկապես թե այս կամ այն ոլորտում այդ ինֆորմացիան ինչպես պետք է օգտագործվի:

**Ա.ՄԿՐՏՉՅԱՆԸ** համաձայնեց, որ օրենքն իր մեջ ընդհանուր սկզբունքներով ձևակերպումներ ունի և պարզաբանեց, որ նախագծում ամրագրված է, որ անձնական տվյալների վարման կարգեր կարող են սահմանվել առանձին օրենքներով, որոնք կկարգավորեն այդ հատուկ կատեգորիաների ոլորտները: Նախարարի առաջին տեղակալի խոսքով՝ օրենքն ունի կարգավորումներ, բայց դրանք ավելի շատ սկզբունքների տեսքով են, իսկ ավելի մանրամասն կարգավորումներ հատուկ ոլորտների օրենքները կկարողանան սահմանել:

**Ա.ԶԵՅՆԱԼՅԱՆԸ հետաքրքրվեց՝** «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը կոչված է պահպանելու անձնական կյանքի իրավունքը, ինչպե՞ս են վիճարկվելու անձնական տվյալներ մշակող մարմնի որոշումները:

**Ա.ՄԿՐՏՉՅԱՆԸ** պարզաբանեց՝ բոլոր մարմինները ովքեր հանդիսանում են անձնական տվյալներ մշակող մարմին կամ պետք է կատարեն որոշումները կամ դատական կարգով վիճարկեն դրանք: Այս օրենքը դառնում է պատճառ, որ վարչական դատավարությունում համապատասխան փոփոխություն նախատեսվի, որպեսզի պետական մարմինները նույնպես կարողանան այս մարմնի որոշումները վիճարկել:

**Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԸ** հավելեց, օրենքն ավելի մակրո կարգավորումներ ունի, դրանում ավելի շատ դեկլարատիվ սկզբունքներ են արձանագրված: Այդ իսկ պատճառով այստեղ, կարծում եմ, էական նշանակություն կունենա դատական պրակտիկան: Այս օրենքից բխող հնարավոր վիճարկումների ժամանակ, թե ինչպիսի՞ նախադեպեր կստեղծեն դատարանները, շատ սկզբունքային նշանակություն կունենա այս խնդրի վերաբերյալ համապատասխան իրավակիրառ ճիշտ պրակտիկա ձևավորելու տեսանկյունից:

### **ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐՑ՝**

**Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԸ** տեղեկացրեց, որ Հանրային դրամական պահանջների վերաբերյալ կարգավորումները հանրությանը վերջին շրջանում հուզող խնդիրներից էր:

Նրա խոսքով՝ ԱԺ-ում վերջին քառօրյայի ընթացքում պատգամվորի կողմից արված օրենսդրական նախաձեռնություններ քննարկվեցին, որոնք վերաբերում էին

ծանուցումներին և բանկային հաշվեհամարների արգելափակումներին: Նախարարի տեղեկացմամբ, Արդարադատության նախարարությունում ներկայում նախագիծ է մշակվում, որը շուտով հանրային քննարկման ներկայացնելուց հետո կներկայացվի Կառավարություն:

**Ա.ՄԿՐՏՉՅԱՆԸ** նշեց, որ հանրային դրամական պահանջների այսօրվա կարգավորումներին բոլորն են ծանոթ: Նրա տեղեկացմամբ, Վարչական դատավարության մասին օրենսգրքում կատարված փոփոխություններով վարչական ակտերի անբողոքարկելի լինելու կանոն սահմանվեց և, ըստ այդմ, սահմանվեց, որ այդ ակտերը կարող են կատարվել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով: Առաջացած խնդիրները բոլորին են ծանոթ, դրա մասին լայնորեն խոսվել է, վիճարկվել է նաև սահմանադրական տեսանկյունից, բայց հիմնարար խնդիրները, **Ա.ՄԿՐՏՉՅԱՆԻ** դիտարկմամբ, հետևյալն են՝ ծանուցման և բռնագանձման անհամաչափության հետ կապված խնդիրներ: Նրա խոսքով՝ այս նախագիծը նախատեսում է կարգավորումներ, որում ընդգրկվել են նաև Ազգային ժողովում քննարկված ու ավարտված նախաձեռնությունները:

Ըստ **Ա.ՄԿՐՏՉՅԱՆԻ**՝ նախկինում կարգավորում կար, որ եթե Ոստիկանության ակտերը ուղարկվում են, ապա դրանք արդեն համարվում էին ուժի մեջ մտած և սկսում էին բոլոր գործընթացները: Այսօր ԱԺ-ում այդ հոդվածը խմբագրվեց, համաձայն որի՝ ցանկացած վարչական պատասխանատվության վերաբերյալ ակտը ուժի մեջ կմտնի հանձնելու պահից: «Մենք այդ հարցերն ի նկատի ունենալով նախատեսել ենք այս օրենքում փոփոխություններ կատարել: Դրանք վերաբերում են հետևյալին՝ հարկադիր կարգով կարող են կատարվել միայն հետևյալ դեպքերը՝ ֆիզիկական անձանցից մինչև 200 հազար դրամ բռնագանձվող գումարի չափով վարչական ակտերը: Մյուս կանոնը հետևյալն է, եթե նույնիսկ այդ գումարը պետք է բավարվի այդ անձի մեկ բնակարանը բռնագանձելու հաշվին, ապա այդ ակտերը նույնպես չեն կարող կատարվել հարկադիր կարգով: Հարկադիր կատարման համար հիմք են լինելու այն ապացույցները, որ վարչական ակտը հանձնվել է քաղաքացուն կամ իրավաբանական անձին: Օրենքը թույլատրելի է համարելու նաև այն, երբ անձը անձամբ դիմել է վարչական ակտն իր



Էլեկտրոնային փոստին ուղարկելու խնդրանքով: Այդ ժամանակ այդ մեթոդը նույնպես կհամարվի անձին ծանուցած: Մնացած բոլոր դեպքերի համար վարչական դատավարությունում նախատեսված են փոփոխություններ, այսինքն կլինեն ուժի մեջ մտած վարչական ակտեր, բայց հանձնման մասին ապացույցներ չեն լինի, դատարանը կստուգի վարչական ակտի ուժի մեջ մտած լինելն ու առոչնչության հարցը»,- պարզաբանեց նախարարի առաջին տեղակալը:

Ի ապահովումն այն պահանջի, որ պետք է հստակ ապացույց լինի անձին վարչական ակտը հանձնած լինելու մասին, Հարկադիր կատարման մասին օրենքով սահմանված են կանոններ, ըստ որի, եթե պարզվի՝ անձը չի ստացել վարչական ակտը, ապա դա հարկադիր կատարման վարույթը կարճելու հիմք է, արդյունքում հարկադիր կատարման ամբողջ ծախսերը կդրվի պետական մարմնի վրա: Եթե հարկադիր կատարման վարույթում պարզվեց, որ վարչական ակտի գումարը վճարվել է, դա նույնպես կառաջացնի նույն հետևանքը՝ վարույթը կկարճվի և վաչական մարմինը կկրի ամբողջ ծախսերի պատասխանատվությունը: Այս կարգավորման հատկանքով հարկադիր կատարման կլինեն այն վարչական ակտերը, որոնք հստակ հանձնվել են անձին, որոնցով հստակ ավարտվել են բողոքարկման ժամկետները և ուղղակի վճարում չկա:

**Ա.ՄԿՐՏՉՅԱՆԻ** խոսքով՝ մյուս կողմից նախատեսվում է կատարողական ծախսերի փոփոխություն. վերջին փոփոխություններով, օրինակ, երթևեկության կանոնների խախտման պատճառով առաջացած տուգանքների առումով կարող է անձը տուգանվել նույնիսկ հազար դրամով, այդ դեպքերում կատարողական ծախսերը կկազմեն այնքան, որքան որ այդ վարչական ակտն է:

## **ՀԱՐՑՈՒՊԱՏԱՍԽԱՆ**

**Ա.ԶԵՅՆԱԼՅԱՆԻՆ** հուզում էր ներկայիս վիճակը, երբ Ոստիկանությունն օրական մինչև 8 հազար ակտ է կազմում, այն դեպքում երբ այդ գումարներով բյուջե չեն լցվում: Նրա խոսքով՝ վարչական պատասխանատվության վճիռներում խնդիրները շատ են:

Կարծում եմ՝ առանց վարչական ակտը անձի կողմից ստացած լինելու՝ չի կարող մտնել ուժի մեջ:

**ԱՐՄԻՆԵ ՄԿՐՏՁՅԱՆԸ** նշեց, որ ուսումնասիրել է նախագիծը, բայց մի շարք հարցերի պատասխաններ չի գտել: Ի՞նչ պետք է կատարվի այն դեպքում, երբ քաղաքացին չունի իր անունով շարժական ու անշարժ գույք, ապրում է կենսաթոշակով և ԴԱՀԿ-ն բռնագանձում է տարածում այդ մարդու թոշակի վրա: Հարց երկրորդ՝ մարդը ծանուցում չի ստացել վարչական ակտի վերաբերյալ, բողոքարկում է , բայց այդ ընթացքում չեն կասեցվում ԴԱՀԿ գործողությունները: Հարց երրորդ՝ եթե դատական կարգով էր նախկինում այս ամենը կատարվում, քաղաքացին դատարանում էր ապացուցում իր ծանուցված չլինելու փաստը, ապա ներկայում այդ ապացուցման գործընթացը հարկադիր մարմնում է լինում: Ինձ հետաքրքիր է ինչպես է իրականացվելու այդ ապացուցման գործընթացը, որպեսզի քաղաքացին ավելի քիչ ընկնի քաշքշուկի մեջ:

Նախարարի տեղակալը նշեց, որ նախագծին կից կա նաև Անվճարունակության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին դրույթ, համաձայն որի, եթե հաշվեկշռային անվճարունակություն կա, գործը հարկադիր կատարման ծառայություն չի գա, այլ գործը կգնա դատարան՝ սնանկության վարույթով: Իսկ այն գույքի ցանկը, որոնց վրա բռնագանձում չի կարող տարածվել սահմանված է ԴԱՀԿ մասին օրենքով: Ինչ վերաբերում է բողոքարկման իրավունքի հարցերին: Որպեսզի դրանք առավել արդյունավետ իրականացվեն, նախատեսված է, որ եթե դու պետք է բերես ապացույց, ապա գործը կկարճվի:

### **ՕՐԱԿԱՐԳԱՅԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՐՑ՝**

**Ա.ՄԿՐՏՁՅԱՆԸ** ներկայացրեց «Շարժական գույքի գրանցման մասին» ՀՀ օրենքի նախագիծը և նշեց, որ դրա նպատակը տեղեկատվություն հավաքագրելու միջոցով շարժական գույքի հետ կապված իրավահարաբերություններում անձանց իրավունքի և օրինական շահերի պաշտպանվածությունն է, շարժական գույքի հետ կապված տեղեկատվության հասանելիությունն է, ինչպես նաև շարժական գույքի նկատմամբ

իրավունքների էլեկտրոնային տվյալների միասնական շտեմարանի ստեղծումն է: Գրանցամատյանի տեղեկատվությունը հրապարակային է լինելու: Շարժական գույք է համարվում ցանկացած գույք, որն անշարժ չի: Ցանկացած անձ, որը պահանաջատեր է որևէ շարժական գույքի նկատմամբ, գրանցում է գրանցամատյանում, որ այս գույքի նկատմամբ ունի իրավունք: Գրանցման համակարգը ներդնելով, ներմուծվել է ապահովված իրավունք հասկացությունը: Ով շուտ գրանցեց, նա ավելի առաջնային իրավունք կունենա տվյալ գույքի նկատմամբ, կստանա նույնականացման էլեկտրոնային համար: Այս գրանցումները կամավոր են: Օրենքը կխթանի, որ վարկային նոր միջոցներ ներգրավվեն, նոր բիզնես ծրագրեր իրականացվեն ու կնպաստի տնտեսության զարգացմանը: Գրանցման իմաստն այն է, որ բոլորը համարվում են տեղեկացված:

## **ՀԱՐՑՈՒՊԱՏԱՍԽԱՆ**

Բոլորը միակարծիք էին՝ նախագիծը կարևոր է:

## **ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՉՈՐՐՈՐԴ ՀԱՐՑ**

**Ս.ՔՐՄՈՅԱՆԸ** խորհրդի անդամներին ներկայացրեց դատարան բերվող բողոքների ընդդատության հարցը: Նրա խոսքով՝ ՀՀ Նախագահի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրով և դրանից բխող միջոցառումների ցանկով նախատեսված է՝ ուսումնասիրել քրեակատարողական հիմնարկի պետի որոշումների դեմ դատարան բերվող բողոքների ընդդատության հարցը և միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքներով որոշակիացնել քրեակատարողական հիմնարկի պետի որոշումների բողոքարկման ինստիտուտը, պարզելով այն հարցը, թե այդ բողոքները պետք է ընդդատյա լինեն վարչական, թե ընդհանուր իրավասության դատարանին»:

Ըստ նախարարի տեղակալի՝ վիճակագրությունը վկայում է, որ շատ քիչ են բողոքները ՔԿՀ պետի որոշումների դեմ: Արձանագրված խնդիրներից մեկն այն է, որ ընդունված չէ այդպիսի պրակտիկա, ինչը նաև մշակույթի հարց է: **Ս.ՔՐՄՈՅԱՆԻ** տեղեկացմամբ, ուսումնասիրել են ընդդատության նորմերը Վարչական դատավարության օրենսգրքով:

Նախկին կարգավորումով ամրագրված էր, որ Վարչական դատարանին ընդդատյա չեն սահմանադրական դատարանի ենթակայությանը վերաբերող գործերը, քրեական վարույթի իրավահարաբերություններից բխող գործերը և քրեական դատավարությանը վերաբերող քրեական գործերը: Նոր կարգավորումով նախատեսվում է, որ Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից բխող գործերը, միևնույն ժամանակ ընդդատյա չեն ՍԴ-ին վերապահված գործերը, Ընդհանուր իրավասության դատարանին վերապահված քրեական գործերը, ինչպես նաև՝ պատժի կատարման հետ կապված գործերը: Մենք կատարել ենք ուսումնասիրություն, որ նաև ձեզ ենք ներկայացրել, ուսումնասիրել ենք նաև միջազգային փորձը, մասնավորապես ներկայացրել ենք Գերմանիայի վարչական դատավարության օրենսգրքից համապատասխան հատվածներ: Վարչարարությանը վերաբերող նորմերը հիմնականում վերցված են Գերմանիայի փորձից, և այնտեղ այդ հարցերը նույնպես ընդդատյա չեն Վարչական դատարանի իրավասությանը: Ուսումնասիրել ենք նաև, թե ինչ կարգի որոշումներ է կայացնում ՔԿՀ պետը, արդյոք դրանք բոլորը վերաբերում են պատժի կատարմանը, թե՛ ոչ և հանգել ենք այն եզրակացությանը, որ այն հարցերը, որոնք վերաբերում են ՔԿՀ պետին և դատապարտյալներին, բոլոր գործերը առնչվում են պատժի կատարմանը: Վերլուծության մեջ սպառիչ ներկայացված է այն բոլոր որոշումների ցանկը, որոնք ընդունում է ՔԿՀ պետը: Մեջբերված են Վճաբեկ դատարանի համապատասխան որոշումները, որոնք վկայակոչում են, որ պատժից վաղակետ ազատվելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու իրավահարաբերություններն իրենց բնույթով քրեաիրավական են, հետևաբար՝ ենթակա են լուծման քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Քրեաիրավական հարաբերություններն իրենց բնույթով հանրային իրավահարաբերությունների տեսակ են: Վերլուծությունը եզրահանգում է, որ ՔԿՀ պետի որոշումները պետք է քննվեն Ընդհանուր իրավասության դատարանում, մասնավորապես՝ քրեական գործերը վարող դատարաններում: Հիմավորումն այն է, որ վարչական դատարանի դատավորների գիտելիքներն ու հմտություններն ավելի շատ վարչաիրավական հարաբերությունների ոլորտից են, քրեաիրավականին ավելի

քաջատեղյակ են Ընդհանուր իրավասության դատարանների դատավորները: Եթե հանրային խորհրդի անդամների կողմից չլինեն առարկություններ, ապա այս փաստաթուղթը մենք կիրապարակեն, որպես հիմք, որպեսզի ՔԿՀ պետի որոշումները բողոքարկվեն ընդհանուր իրավասության դատարաններում:

## **ՀԱՐՑՈՒՊԱՏԱՍԽԱՆ**

Գ.Հարյարապետյանի այն դիտարկմանը, թե ինչու միայն պետի որոշումները, միգուցե ՔԿՀ գործողությունը կամ անգործությունը նույնպես հնարավոր է բողոքարկել, **Ա.ՔՐՄՈՅԱՆԸ** պատասխանեց. «Պետի կամ այլ մարմնի որոշումները, միանշանակ, կարող են բողոքարկվել: Մենք վերլուծություն ենք կատարում, որ դեպքերում ապահովված չեն պատիժը կրող անձանց դատական պաշտպանության իրավունքները: Մենք աշխատանք ենք տանում, որ այս ընթացակարգերի մասով նորմ ամրագրվի: Ապացուցման բեռը բաշխվելու է համամասնորեն, այսինքն՝ բողոք ներկայացնող անձը պետք է ներկայացնի այն ապացույցները, որոնք պետք է քննարկի դատարանը, դատարանի պահանջով էլ ՔԿՀ-ն պետք է ներկայացնի ապացույցներն ու հիմնավորի դրանք: Բողոքը ներկայացնող անձը պետք է առնվազն հիմնավորի իր բողոքը: Մյուս կողմն էլ պետք է ներկայացնի այն ապացույցները, հիմքերը, փաստաթղթերը, որոնք դրվել են ՔԿՀ պետի որոշման հիմքում: Մենք կանոնակարգման խնդիր ունենք երկու հարցով՝ ընթացակարգեր և վերադատության կարգով բողոքները»:

**Ա.ՋԵՅՆԱԼՅԱՆԻ** խոսքով, եթե անձը հայտարարի, որ դիմումը ներկայացրել է և ընդունել են այն ու երկրորդ օրինակի վրա չեն մակագրել, որ ստացել են կամ ընդհանրապես չեն ընդունել, ապա վարչարարության հիմնարար սկզբունքը հետևյալն է, եթե մարդը գործ ունի պետության հետ և հայտարարեց մի բան, ապա դա համարվում է հաստատված, եթե հակառակը չի ապացուցվել: Իսկ ՔԿՀ-ներում դատապարտյալները չեն բողոքարկում, որովհետև այդպիսի մեխանիզմ է ընդունված, որովհետև ապացուցման բեռն իրենց վրա է դրված: **Ա.ՋԵՅՆԱԼՅԱՆԻ** կարծիքով՝

վարչական դատարանները պետք է գործը քննեն, քանի որ դրանց դատավորներն ավելի լավ են պատրաստված, քան քրեական դատարանների դատավորները:

**Ս.ՔՐՄՈՅԱՆԸ** նշեց, որ նախապես Խորհրդի անդամներին ուղարկված է եղել վերլուծությունները: Նման առաջարկներ անելու ժամանակ պետք է լինեն նաև հիմնավորումներ: Եթե պատիժը սահմանում է մի դատարանը, ապա պատժի կրման հետ կապված բողոքները պետք է քննի միևնույն դատարանը, որովհետև դրանք քրեաիրավական գործերում ավելի մասնագիտացված են: Մենք դեռ չենք հրապարակի մեր վերլուծությունները, կսպասենք գրավոր առաջարկներին ու դիտողություններին: Ուղղակի պատժի կատարման հարցերը չի քննվում վարչական դատարանի կողմից: Պատժի կրելու հետ կապված հարցերում ընդհանուր իրավասության դատարաններն ավելի են հմտացել, ավելի քաջատեղյակ են, դրա համար էլ մենք որոշել ենք, որ այդ հարցերը պետք է քննվեն հենց այդ դատարաններում:

**Ա. ԶԵՅՆԱԼՅԱՆԸ** նկատեց, որ քրեական գործը քննող դատարանը նման գործերի քննման փորձ չունի, որովհետև ոչ ոք չի դիմում այդ հարցով:

**Ս. ՔՐՄՈՅԱՆԸ** արձագանքեց, որ դատավորը փորձ կարող է չունենալ, սակայն ունի գիտելիքներ, պատժի հետ կապված հարաբերություններին քաջատեղյակ է: Նախարարի տեղակալն ընդգծեց, որ երկշաբաթյա ժամկետում Նախարարությունը կսպասի առաջարկներին, և եթե հանգեն օրենք փոխելու եզրակացության, ուրեմն կգնան դրան:

**Ա. ԶԵՅՆԱԼՅԱՆԸ** ավելացրեց, որ դրանք իրենց բովանդակությամբ վարչական ակտեր են՝ անկախ նրանից՝ որևէ տեղ գրված են, թե՛ ոչ:

**Ս.ՔՐՄՈՅԱՆԸ** էլ շեշտեց, որ կատարվել է վերլուծություն բացառապես ընդդատության տեսանկյունից: Նրա խոսքով՝ ներկայում խնդիրն ընդդատության

մասով է, իսկ վարչական դատավարությամբ սահմանված է, որ պատժի կրման հարցերը վարչական դատարանը չի քննում:

**Մ.ՄԻՆԱՍՅԱՆՆ** էլ անդրադարձավ բարձրացված հարցին և շեշտեց, որ կա քրեորեն հետապնդելի արարք, որը թեև ունի վարչական բնույթ, բայց վարչարարության մասի տոկոսը շատ քիչ է, որ տեղափոխվի վարչական դատարան, ավելի նպատակահարմար է ընդհանուր իրավասության դատարանի լիազորությանը թողնել:

### **ՈՐՈՇԵՑԻՆ**

Նիստի ընթացքում քննարկված հարցերի վերաբերյալ առաջարկներն ու դիտողությունները երկշաբաթյա ժամկետում ուղարկել ՀՀ արդարադատության նախարարին կից հանրային խորհրդի քարտուղարության [council@justice.am](mailto:council@justice.am) էլեկտրոնային հասցեին:

Արձանագրությունը բաղկացած է 15 էջից: